

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտարանի համար 12 մր.  
Տարեկան 6 »  
Արժանահամարի համար Տարեկան 15 »  
Վեցամսեայ 8 »  
Ամերիկայի համար Տարեկան 3 սյր.  
Վեցամսեայ 1.50 »  
ԿԱՆՏՈՆԻ ԿՆՆՈՒՄԵՆԻ

Մանուցման տարի առաջին երեքին համար 40 սանթիմ. հ. իսկ վերջին երեքին համար 20 սանթիմ. հ. երեքին անկի անգամներու համար 20 ժո զեղջ կրչայ :

# ՇԱՐՋՈՒՄ

Նամակ եւ դրամ զրկել  
Խմբագրութեան հասցիսն

—

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԺԻ ԵՎ ԵՍԱԿՈՒ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Մանուցման համար մեկ  
Երևանից 20 Ս Ա Ն Թ Ի Մ

Պաշտարանի համար մեկ  
Պ Թ Ի Ն 15 Ս Ա Ն Թ Ի Մ

Ա. Զ. Դ.

Ի նպատակ ազգային երկսեռ վարժարանաց՝ «Կաթնբերին Հովուարդ» ուղղակի թիւեր պիտի ներկայացուցուի, յառաջիկայ հինգշաբթի գիշեր, 3 փետրուար թաարուն Սանդղազի մէջ :

Հոգեբարձութիւն լիայոյս է որ քաղքիս արգոյ հայ հասարակութիւնը պիտի փութայ իւր օժանդակութեամբ սատարել սոյն ներկայացման յաջողութեան համար, յօգուտ ազգին ազգատ մանկուկաց կրթութեան վսեմ գործին :

Ի դիմաց Ազգ. երկսեռ վարժարանի Հոգաբարձութեան

Վ. Առնազպարի Ատենասպետ  
Գ. Աւագեան Յ. Մ. Թովմասեան  
Վառնա, 1 Փետրուար

Ն.Ա.Մ.Ա.Կ.Ա.Տ.ՈՒՓ

Սօֆիայի մեր բաժանորդներէն կը խնդրենք որ հաճին իրենց թէ անցեալ և թէ այս տարուան բաժնեգրիները յանձնել մեր նոր գործակալ Պ. Հայկ Մ. Յակոբեանին :

— Ալեքսանդրիա, Պ. Պ. Վ. Հ. և Մ. Գ. — Կը խնդրենք որ ուղղակի խմբագրութեան հասցէին զրկէք բաժնեգրիները :

— Բնիկ Չմշկածագցի Խարասար գիւղէն Խաչատուր Կիրակոսեան ծ տարի առաջ անյայտացած է. Պապը-Ալիի ցոյցէն երկու ամիս յետոյ նամակ առնուած է Ռուս մանիոյ Կարահիլ քաղաքէն, 33 տարեկան երկայնահասակ գեղին պեխերով և քիչ մը ծաղկաատար. ուր կամ որտեղ, ողջ կամ մեռած ըլլալը ով որ գիտէ կը խնդրուի իմացունել խմբագրութեան :

— Պ. Աղարիա Մօմճեանի հասցէն է՝ (Ռուսմանիա) Պրախա Սարգիս Թաղարեան Սթրատա Միլիթէն, թիւ 1 :

— Պ. Մկրտիչ Առաքելեան անուն անձը կը գտնուի Չըրփան, Ոթէլ-Մօսկօֆ :

ԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ներկայ թուով սկսուած է «Շարժում»-ի երրորդ տարին : «Շարժում»-ը հետեւեալ տարին էլ, ինչպէս և մըշտ՝ քանի որ յոյսով ունի, պէտք է շարունակէ կուռլ շարժի, կեղծ, թրքացած, սուփեոտ, անսկզբունք, նախապաշարված և հայ յեղափոխութեան հակառակ տարրերի գէմ :

Կախ ամեն բանի գէմ, ինչ որ հակառակ ու խոչնդոտ է հայի բարոյագէտ մարտնչութեան և վերածնութեան գործին :

Ահա «Շարժում»-ի նշանաբանը : Ու այդ կուր մենք պէտք է շարունակենք անխնայ, և մղին կիրպով, մեր գիմաց ով էլ կանգնած լինի :

Այսուհետեւ «Շարժում» ժամանակ չը պէտք է վատնի գրական փողոցային տարրերի համար, որովհետեւ ամենահաստատ կերպով համոզվեց թէ փողոցային գրականութեան մշակների հետ վէճի մոտենլ կը նշանակէ փողոցի մարդ դառնալ, այն էլ «տաճկական փողոցի մարդ» :

Երկու տարուայ մէջ, աշխարհի զանազան անկիւններում տարազնած հայ երիտասարդութիւնը սիրով ընդունեց «Շարժում»-ը, ինքնաբերաբար և սիրով քաջալերեց : Այդ երիտասարդութիւնը եթէ նիւթապէս մեծ օգուտ չը տուց մեզ, գտնէ մտաորայէս և բարոյագէտ ա՛տկցեց այս դժուարին գործի մէջ : Եւ այս եղաւ մեր ամենամեծ զօրովիզը միջուկ գծարին պայքարը՝ մեր բազմաթիւ հակառակորդների գէմ : այդ ողբերոց մեզ անվհատ կերպով մղել գաղափարի սուրբ կուր, որովհետեւ համոզեց թէ այսուհետեւ հայ կեանքի մէջ մաքուր գաղափարների զինուորը առանց ընկերի չի մնայ, գաղափարական հայ երիտասարդութիւնը զոյսով ունի և միշտ պատրաստ է օգնութեան հասնել նրան, ով, քիչ թէ շատ, գաղափարի համար բացարձակ կուր է մղում...

Եւ ահա այս տարի էլ յենվում

այդ գաղափարական ու մեր ժողովրդին ծառայելու փափաք ու տենչ ունեցող զարգացած հայ թարմ ու մերի վրայ՝ պէտք է շարունակենք, մեր ու մերի համեմատ, «Շարժում»-ը օգտակար դարձնել հայ ժողովրդին :

Այստեղ աւելորդ չենք համարում խնդրել մեր բոլոր թղթակիրներին և աշխատակիցներին որ թեթեւամտորար չը վերաբերվեն դէպի իրենց քննադատած հասարակական գործունէութեան մէջ գտնվող անձերը և միմիայն ճշդութիւնը դրեն, առանց ենթարկվելու անհատական տեսլութեան և համակրանքի աղղեցութեան :

Գիտակցաբար ստախոսելը անբարոյականութիւն է. իսկ անգիտակցաբարը, երբ խոյս թիւն և վնասակար երբխոյս թիւն :

ՎԱՐԴ)

ԴՈՒ ՉՍԵՆԱՐ, ԴՈՒ ՍԵՇՏ ՊՈՏԻ ԱՊՐԻՍ

Ճառագայած ժողովրդի զաւակ՝ տառապագին օրերու ծնունդ՝ բուշորս կողմից սուրի, թուրի, վայրագ հարստահարութեան, բարբարոս բռնաբարութեան ստեղծած արիւնի կոհակները տեսար : Ե՛հ այդ ժահրոտ արիւնը սակայն որուն մէջ խեղդամահ կըլլար հայը, ցնցեց քեզ ու յանկարծ վիթխարի առնականութիւնը քեզ պարտուեց :

Այդ վայրկեանէն իսկ վրէժխնդրութեան ահռելի ստուաւը ձեռքը քեզի տալով անօգուտ անձնաւորութիւնը քաջալերեց :

Ե՛լ վախնա՛լ պէտք էր : Ան մը անձնուէր հողիներով շրջապատուած՝ սարէ սար վաղեցիլը, ժայռէ ժայռ թռար. ուր ոչ սլացար հոն գողգողալով քու անունդ յիջի չեցին :

Մոռցար քու «Եսող» ու մղձաւանդի մը պէս մէն մի քայլիդ բռնաբարութեան, մարթնածնեալ ուրուականները տեսար ու մայրնու դուայտտ հեծեծանքը միայն լսեցիր :

Եթիւլա որ կը պարծենար թէ իր ձեռն կոխած՝ տեղը խոտ չի-

պիտի բուսնի, պիտի սոսկար քու ներկայութեանը և կեղտոտ կենդանութիւնըն ալ թող ինքզինքը շատ ու շատ երջանիկ զգայ և թէ իր արշաւանքներուն մեջ քեզի պէս հերոս թշնամի մը չունեցաւ : Եթե մարի շարունակ հերոսի ալք վիհ կեանքը աղբեցար : Եթե մարի շարունակ դուն պարծանքը եղար ազատութեան կրակով արտուող ժողովրդին :

Այդ կոխներովդ հասկցուցիր անդամ մըն ալ կարգ մը գիււանդէտի հոյեր առնող իմաստակապոյ շնորու թէ կուր է ազատութեան միակ ու անհերքելի պայմանը : Կինդ, որուն առած է իր դիւցապական հողիէդ մաս մը, անբաժան ընկերդ եղաւ արկածալից կեանքիդ :

Ստով ալ հասկցուցիր ո՞վ մեծ մարդ, թէ կինը շատ մեծ դեր մը կրնայ ունենալ յեղափոխութեան ու գոյութեան կռուին մէջ միանգամայն :

Հայրենիքիդ սիրուն համար մէկ հատիկ զաւակիդ ալ չը յանայնցիր, և ան ալ քեզի հետ իր ալիւնի վերջին կաթիլը կուրի ասպարէզին վրայ թափեց :

Մինչդեռ անդին իր շահերուն մէջ անասացած կամ պարծանքի մէջ բթացած հարուստը փոքրիկ լուծայմի իսկ չուզեց զօհել ազատութեան համար այն ժողովրդին որուն զաւակն ըլլալ կը կարծէր : Վա՛յ իրեն :

Սակայն Սերոր, հանգիստ եզիք դուն և ընկերներդ. ձեր թափած արիւնի իւրաքանչիւր կաթիլէն մէկ մէկ հերոս պիտի ծնի ու այդ հերոսները պիտի ամբողջացնեն ուղատութեան այն չընաղ գործը որուն ամբողջովն նուիրուած էիր :

Պատմութիւնը փառաւոր է շեքով նոր սերունդին պիտի փոխանցէ քու պատկառելի անունդ ու նոր սերունդը ազատութեան վայելքին մէջ քու յիշատակովդ առչտած պիտի մնայ :

Դո՛ւն չը մեռար : Սերոր, դուն միշտ պիտի ապրիս :

ՇԱՒԱՐՇ  
Իզմիր, 22 Յունուար

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏՐԱՊԻՉՈՆ, 28 Դեկտ.

Օրերս թշուառութեան մէջ մնալով և 40 փարայի փոստայի ծախս չունենալով նամակներու շարքը 300ի հասած է, նեղութիւնը և շքաւորութիւնը յաղթահարած է ամէնքը, յոյսերնիս ամէն տեղէ կտրած ենք. տեղիս կուսակալին տուած խնդրագիրներու նոյնպէս և պատրիարքին զրկածներու և հեռագիրներու թիւը անհասկնալի է. բայց ամէնքն ալ մէկ փարայի տեղ չը բռնեցին, ի զուր ջանք և անօգուտ վատակ. Այդքան թախանձանայ վրայ պատրիարքարանը 30 ոսկի և մէկ հակ կարուած զգեստներ զրկեց, արգիլուածներուն բաժնետու համար. Այ բան մը չի կայ, միմիայն Խոսրով վարդապետ 40 մարդ զրկեց Կանակայ Ս. Ստեփաննոսի վանքը. իբր թէ հոն պաշտպանուին Խեղճեր, մեծ ուրախութեամբ գացին, կարծելով թէ Մշոյ վանքերուն կը նմանի և առատ սնունդ կը զըտնան, սակայն յուսախարուեցան. որովհետեւ այդ վանքը սոսկ ճգնարան մըն է և ուսելու ոչինչ կայ:

Խեղճերը չը կրնալով հետեւել Սուրբ Ստեփաննոսի ճգնութեան՝ երկու օր անօթի մնացին՝ վերջը վերադարձան քաղաքիս սուղնորդարանը: Տեղիս կուսակալը այդ թշուառութիւնը անսնալով 120 անձին, իբր չքաւոր, 120 օխ հաց նշանակեց. այժմ 120 հոգի գացին ճգնարանը և անոնցմէ շորս հինգ կուգան նշանակուած հացը ստանալու:

Անցածները, կառայարութեան որոշմամբ, խումբ, խումբ Իզմիր զրկուեցան. առջի գնացող խումբէն միայն մէկ հոգի ձերբակալուած է հոն, իսկ Բ. Գ. Գ. և Ն. խումբերը բոլորն ալ Իզմիրի մէջ

բանտարկուած են: Գանի մը օրէն կրկին մաս մաս ուրիշ տեղեր զրկուած են:

Տրապիզոնի մէջ ալ թը ինը ամիս է որ կը շարժարուն վեց վանքեր, 48 խուրիկցի, 12 բաղէչցի, 33 մշեցի, 31 պուլանըլցի, 20 խնուցի, 21 բաբերգցի, 17 գերճանցի, 9 քէմալցի, 19 քղեցի: Եթէ այսպէս շարունակուի մինչև գարուն բոլորս ալ պիտի մեռնինք թէ անթուրթեմէ և թէ ցուրտէ:

Մուշէն կը գրեն թէ Ղըզըլ-Աղաճի մէջ երկու օտարական անձեր ձերբակալուած են, որոնց պատճառաւ շրջակայ գիւղացիները բաւական չարաչարած են: Քիւրդերն ալ շատ կը նեղեն. հացը շատ սուղ է և զինը օրէ օր կը բարձրանայ:

ՍԱԼՕՐ

ՃՐՁԻ, 18 Յունի.

Անցեալ շաբթու յունի. 7 Ուէսթ-Հոպօքընի ազգային նորահասակ դպրոցի պատուարժան վարչութիւնը նոր արւոյ առթիւ շքեղ հանդէս մը տուաւ ի նպատակ զպրոցին: Սրահը 200ի մօտ երկսեռ բազմութիւն մը լեցուած էր. ամէն ղէմքերու վրայ ուրախութեան արտայայտութիւններ կը նշմարուէին. այն օրը լոկ հըրճուանայ և խնդութեան օր մըն էր: Ուրիշ անգամներ ալ նոյն սրահին մէջ այնչափ հոծ բազմութիւն տեսնելու բայեքաղոթութիւնը ունեցած էր բայց... չէի նշմարած այնչափ մեծ ուրախութիւն մը՝ ինչ որ այս անգամ կը տեսնէի:

Ինչո՞ւ այդչափ մեծ ուրախութիւն... Արգիօ՞ք նիւ-Եօքէն, Փաթրոքընէն, Ճըրզիէն և Ուէսթ-Հոպօքընի հայերը համախմբուելով, իրարու ծանօթանալու և տեսութիւնն էր պատճառը, թէ աւելի զօրաւոր ու հիմնական պատճառ մը կը գրգռէր ամէնքը: Տարկոյս չունիմ այդ ամէնը, և մանաւանդ վերջինը... (Գրողոցի հաստատումը):

Սրահի մէջտեղը դրուած մեծ սեղանի մը վրայ առատ լցուած էր կաղանդի վերաբերեալ բազմատեսակ քաղցրեղէն ու մրգեղէն. անոնց վրայ

երկու փոքրիկ ափսեներ կային զարգարուած գոյնզգոյն մոմերով: Երիտասարդ մը մեծ դաշնակի ժը վրայ զինուորական մարշեր և ազգային յուզիչ երգեր կը նուագէր:

Վերջապէս հանդէսը բացուեցաւ Տ. Պ. Գալաթիարեանի ատենապետութեամբ. հագրւ եօթը տարեկան տղայ մը բեմ ելաւ բոժակի ձեռքը բռնած, զինի վրայ գեղեցիկ արտասանութիւն մը ըրաւ, ու խօսքերը աւարտելուն հետ մէկտեղ բաժակն ալ պարպեց: Հանդիսականաց ցնծագին ճափահարութիւնները երկարեցաւ մինչև փոքրիկը իր տեղը հասաւ:

Օր. Արաքս Բրտանեան ալ զպլոցի վրայ գեղեցիկ օտարաւոր մը արտասանեց ու ծափահարուեցաւ: Դարձեալ փոքրիկ մը՝ հինգ տարեկան Օր. Աղաւնի Բրտանեան իր հօր ջանքերով վարժուած անգլիերէն երգ մը երգեց շարժումով: Երկու տարեկան ևս ծափահարեցին և երկար ատեն չի կրցին զսպել իրենց ծիծաղը:

Յետոյ բեմ ելաւ ճառագոս մը՝ Պ. Ա. Պատմաճեան, ինքնաբով պատրաստուած երկար ճառը կարդաց, նիւթն էր «գպրոցի պէտքութիւնը»: Պարոնը օրինակներով և հաստատիչ փաստերով ապացուցեց զգրոցի օգուաները. հարեւանցի դիտողութիւն մը ըրաւ նաեւ կղերականներու վրայ, ըսելով պէտք չէ՝ մենք միամտարար հետեւինք կղերականներու այն գասակարգին, որոնց մէջ «եսն ու «կեղծաւորութիւնը» արմատացած են. դիտարկու ենք զանազանի լուսն ու վատը, անկեղծն ու կեղծը: Նոր տարւոյ առթիւ ալ զբաժ լաւ կտոր մը կարգալով վերջացուց ճառը: Բուն ծափահարութիւնք քաջալերեցին երիտասարդը իր այնչափ լաւ ու օգտակար աշխատութեանը համար:

Երկրորդ ճառագոսն էր Պ. Ս. Այիփուսեանը. նիւթն էր «Հայ երիտասարդութեան կատարած զերը» (դարավերջի վերջին տարիներուն մէջ, 1890էն ի վեր). ասոր կարճ բայց ազու ճառը լաւ տպաւորութիւն թողուց հանդիսականներուն վրայ: Յիշեցուց «Գում-Գափու»ի ցոյցը ու պատեց ի՛նչ ինչի արդիւնք էր այն. յիշեցուց նաեւ Սուլթանի խօսքը իր նախարարապետի բերանով—Հայկական խնդիրը մեղսելու ամենադիւրին միջոցը հայերը մեռցնելն է:

Վերջապէս փաստեց, կոտորածներու և հայաջնջումին պատճառը յե-

ղափոխականները չեն, այլ... հայերն ու հայկական խնդիրը. մեռուցի՞ք ըսաւ հայաթեան արդար խնդիրը, անա՛ մ'չ յեղափոխութիւն կը մնայ որ ջախջախուի, ո՛չ ալ յեղափոխական որ անիծենք:

Ճառագոսը վերջացուց խօսքերը քաջալերելով երիտասարդներն և բան մէն անոնք, որոնք բռնաւորի չարատանջ ճնշումներուն դէմ բողոքող և հայու արդար իրաւունքը պաշտպանող հանդիսացեալ են: Արաքսը քաջանք շարունակելու իրենց գործը գիտնով միայն կարելի պիտի ըլլայ ազատել Հայրենիքը:

Կրկնակի և բուրն ծափահարութիւններով ներկայք իրաւունք սուրին պարոնի՝ քոյրը՝ Եւանջիլեան, ներեցէք, միջանկեալ հարցնել, հանդէսի աւարտումն յետոյ շատեց վկայեցին պարոնի յովանազակ ճառի ճշմարտութիւնը, բայց ինչ որ զարմանքս շարժեց սա՛ է թէ, երկասարգ մը ըսաւ. եթէ միեւնոյն ճառը յեղափոխականի մը բերնէն լսած ըլլայինք բնա՛ւ չի պիտի հաւատան յինք:

Ինչո՞ւ... Ազնիւ ընթերցող, հիմա կուրնէ՞ մի՛ մտմտար այդ մասին՝ հանդէսը վերջացած չէ դեռ: Գրութիւնս քիչ մը ևս համոտօտելու համար զաշնակի ընկերակցութեամբ երգուած ազգային ընտիր երգերը մէկիկ մէկիկ գրելը զանց կանոնմ:


Օրուան ատենախօսն էր Տ. Թ. Չարաֆճեան. նիւթն էր «Անցեալը» գնահատելու չափ զինքը, գրիչս սակար կը գտնեմ: Անոր տուած մէկ օրինակը միայն հոս գրել կը փափաքեմ:

Երբ խօսքը տեղէն անչարժ, լոկ «խօսք վաճառող» գասակարգին վրայ էր ըսաւ—«Եթէ պէ՞տք է մեղադրել «Անցեալը» լեռը ըսելով թէ, կեցի՛ր, սպասէ՛ մինչև որ բոլոր լեռները բուն կ'ըն, սպա զու որ բուն կեցողը հուր ու լաւ վաներդ, պէտք է մեղադրել նաեւ դործոն յեղափոխականները մի, կենայ, սպասէ՛ մինչև որ բոլոր հայերը յեղափոխական ըլլան, սպասան ալ միմեզ գործընդհանրապէս կը խնդրուի զմեզ զմեզ զմեզ»:

Ինչ կը խնդրուի զմեզ զմեզ զմեզ լուսաւորեալ զգրողքի՞ լուսաւորեալ կրկնութեամբ մէկ քաղաքային բան մըն էր, գէտ ու խելացի մարդիկներ ունինք կղեր հա՛, մտիկ ըրի՛ր անոնց պրօպագանտան, մ'լ քեզ կը թողու՞մ աւնոնց յարմար ամական մը ընտրելը...

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԸ



Բուլղարական X. քաղաքը գտնվում է մի մեծ հովտի մէջ, գրեթէ երեք կողմից շրջապատված լեռներով. ամառը թաղված է բուսականութեան մէջ, լեռնային ջրերը վազում են դէպի քաղաք և փոքրիկ ու վճիռա առակների բաժանվելով տարածվում բոլոր փողոցների մէջ ու իրանց քչքչոցով մի առանձին հրապուրանք տալիս քաղաքին:

Տաճկացի տիրապետութեան միջոցին այդ քաղաքը բաւական ըմբոստ և պատամբ բուլղարներ է տւել. նոյնիսկ մի հուշակաւոր հայդուկ խումբապետ: Անշուշտ այդ հրոսակներին

ծնողը, քաջալերողը և պահպանողը եղել են մոտակայ լեռները, ձորերը և անտառները:

Ահա այդ քաղաքում, 189 ի ամրան մի գեղեցիկ օր. նեղլիկ փողոցներից մէկի վրայ, մի համեստ տան պարտիզում, վճիռ ու քարակալուսն առակի եղբին, զալարճ նոտնի զիմաց նստել է մի համակրելի, գեղեցիկ, նուրբ դիմագծերով, սեւ-ալիքաւոր մաղերով, հայկական, բայց աւելի մեղմ աչիւրով հայուհի. նրա ծնկները վրայ փռված է մի ալ կարմիր մետաքսէ կերպասի մեծ քառակուսի կտոր: Երիտասարդ տիկինը ասեղնագործում է ոսկէթելով. մատերը արագ արագ շարժվում են ու հետզհետէ ամբողջաՆում է սուիւծի գլուխը— բերանը լայն բացած և բաշը ցրված: Հրապուրելի նուսու վրայ բացված արիւնագոյն ծաղիկները՝ մեղմ զեփուռից օրորվելով, աննշմարելի կերպով թէքվում են՝ դէպի ալ կերպասի կողմը. աշխատող տիկինը քթի տակ մրմնջում է ինչ որ մի տխուր, շատ

տխուր եղանակ, և երբեմն իր խոշոր ու թախմալի աչքերով դիտում ասեղնագործած գլուխը. մեղմիկ կերպով շնչնկում է և առակը ու իր ձայնը խառնում հայուհու մեղմախնայի մրմունջի հետ...

Մի քիչ հետո, մի 7-8 տարեկան աղջիկ, կիսած խնձորի պէս երիտասարդ տիկնոջը նման, իր շիկահեր փոքրիկ տիկնիկը (քուքլա) լողացնում է վճիռ առակի մէջ՝ երգելով.

«Բաւ է եղբայր վիզը ճկել, ժամանակ է հայ գրօշակին ծածանել»...

Կարում է տիկինը. ահա առիւծի ամբողջ վիզը երեւաց. հոգարտ, վեհանձն, Ոսկենկարը փալիւրում է արիւնտ շրջանակի մէջ. տիկինը կըրկին դիտում է: Այդ միջոցին նրա մօտ վազեց փոքրիկ աղջիկը, ինքն

էլ մի ակնարկ զցեց ոսկէ նկարել վրա և բացաբանչեց թուրքերէն.

- Վայ մայրիկ, առիւծ ևս կարել, որքա՛ն մեծ բերան ունի:
- Այո, աղջիկս, կարեցի, նոյնպէս թուրքերէն պատասխանեց մայրը. չուտով պարոն Հրանդը պէտք է գայ և գրօշակը տանի:
- Դրօշակն ի՞նչ է մայրիկ:
- Այ սա, որ կարում եմ:
- Ո՛ւր պիտի տանի:
- Հայաստան, դառնուկս:
- Այդ գրօշակով ի՞նչ պէտք է անեն Հայաստանում:

— Այնտեղ հայդուկներ կան, հայ յեղափոխականներ, որոնք թուրքերի հետ կուռում են: Հայաստանը մեր հայրենիքը, մեր պապերի՛նքի կրկնը ազա՛ տելու համար:

— Բայց ի՞նչու այդչափ կարմիր գոյն ունի այդ գրօշակը, բոլորովին արիւնի պէս:

— Որովհետեւ կուր մէջ արիւն է վազում. և, այս գոյնը ազատութեան համար մղող կուր նշան է:

փոխանակ անգործ ու անտարբերները գործընկերները . գործողները դադարեցրին կը ջանան . . .

Անցնինք .  
Տ. Ասենախօսք նոր բացուած դպրոցի կարեւորութեան վրայ ալ խօսելով վերջացուց խօսքերը .

Հանդիսակաւները մեծ ու պզտիկ ու ժգնակի ծափահարեցին յարգելի ասեղախօսքը .

Մանօթ դաշնակահար պատ. Սարկաւազեան ալ ընտիր մարչ մը նուագեց . Քննադատողը տաք ծափերով իր շնորհակալութիւնը յայտնեց . Յետոյ մրցեցէնը բաժնուեցաւ . մտերմ յատուկ նուիրատուութիւններով սկսան վառիլ . վերջինը աւելի ետքնորդաւոր կը թուէր ինծի . ինչ որ կը զգայի նոյնը կը զգային ամէնքն ալ . անվառ մտերմ լոյսափայլիւր , մանուկներէն բարեկէսն ու մեքերը . լուսաւորելու քնան էր . Ապա կեր ու խումը սկսաւ . ժամը երկուքին բացուած հանդէսը մինչև եօթը վերջացաւ . ամէնքը ցրուեցան ուրախ եւ գոհ .

Յաջողութիւն կը ցանկամ նորահաստատ գպրոցին . եւ շնորհակալութիւն պատուարժան վարչութեան .

ԾԻԼ ԹՇՏՈՒՆԻ

Յ. Գ. — Վերջին օրը խմացայ որ սրանի տէրը (զերմանացի մըն է) երբ որ կը լսէ արուած հանդէսը ի նպաստ գպրոցի է , ինք ալ մէկ ու կէս տօլար կը նուիրէ յօժարակամ .

Չըլլա՞յ թէ ան ալ «դաշնակցական» եղած է . որովհետեւ գպրոց կը սիրէ ու կօզնէ անոր .

նոյն

ԵՍՇ , 22 Յունիվ .

Ուսմէն ազգը միմիայն երեւանցի հայուն պատիւ կընէ , իսկ ներքուստ , մեծէն մինչև փոքրը եւ մանաւանդ անոնց կղերը ստակալի անտիրութեամբ զինուած են հայոց «բէժ»-ը իրերու հեթանոս կը ճանչնան հայերը : Ուսմէն մը երբ հայոց մը հետ մէջ կուենանայ , այն ապէն «իբր սրտին մէջ ունեցնած» անտիրութիւնը դուրս տալով կըսէ հայուն «արմէն» սպորտը պիտի հայ կանուանէ : Եւ գիտէ՞՞ այս ատեւութիւնը բոլոր ուսմէն ժողովրդին մէջ տարածուած է միայն երկրին , բրինաց խստու-

— Բայց առանց գրօջակի չե՞ն կարող կուել , մայրիկ :

— Ինչու չէ , կարող են . բայց կարմիր գրօջակը սիրտէ տալիս կըուող հայդուկներին . առանց գրօջակի կուուում են միայն աւազակները , հայրենիքի պաշտպանութեան համար կուողները միշտ գրօջակ ունեն :

Միեւնոյն ժամանակ գրօջակը ազատ աղբ լինելու նշան է . ձեռ մի քիչ առաջ դու երգում էիր— «Բաւ է եղբայր վիզ ձկնիլ , ժամանակ է հայ գրօջակը ծածանել» :

— Այո , մայրիկ եւ երգում եմ , բայց չեմ հասկանում :

— Հիմա չես հասկանում , որովհետեւ հայերէն լաւ չը գիտես , դպրոցում հայերէն կը սովորես եւ կը հասկանաս :

— Բայց ճիշդ մայրիկ , թուրքերէնը թուրքերի լեզուն է , մանաւանդ որ նրանք մեր եղբայրներին եւ քոյրերին մորթում են . վատ են . ինչու մենք խօսում ենք այդ լեզուով :

— Արովհետեւ մեր պատերը թուրքերի պէս են ապրել , դրա համար էլ մեզ հայերէն չեն սովորեցրել , այ հիմա դուք սովորում էք : Հայաստանի հայերը մեզ պէս չեն , նրանք հայերէն են խօսում :

Թեան պատճառաւ , որ կրօնքի ու ազգութեան ազատութիւն արքուած է եւ որ եթէ մէկը ուրիշին կրօնքին օրհնից նախատական խօսքեր ընէ անմիջապէս կը պատժուի . չեն կրնար գուրստալ համարձակ կերպով իրենց ասելու թիւնը : Երբեմն մէկ մէկ մարդ հրապարակ կելլէ եւ իւր վատութիւնը դուրս տալով հասարակութեան միտքը կը պղտորէ :

Վերջերս Պուրբէշ հրատարակուող «Երօքա» լրագրին մէջ , շունեւուն ունեցած հասարակութեան մասին հետեւեալ յօդուածը հրատարակուած էր . «Շունը մարդու ամենէն հաւատարիմ անասուն է , բայց մարդիկ երբ իրարու հետ կը կուրին մէկը կէկու իբր նախախնայ շուն կանուանեն . սակայն չեն գիտեր որ շունը իւր ունեցած հաւատարմութենէ զատ այնպիսի մի սուրբ անասուն մըն է որ մինչև իսկ զինքը պաշտող ազգեր կը գտնուին , օրինակ հայերը» : Այս սողերը Պուրբէշ հրատարակուող լրագրի մը է :

Վերջին մէջ զետեղուած է . որչափ մեծ նախատինք հայութեան եւ մանաւանդ Ռուսմանիոյ հայոց : Արդե՞ք մեր Ռուսմանիացի ազնիւ ազգայինք պիտի լուսն ու շի՞ պիտի պաշտպանեն հայութեան ու իրենց պատիւը . չեմ կարծեր որ պատուոյ նախանձախնդիր ուսման հայը լուր ու մունջ կենայ այս տեսակ նախատանայ առջեւ :

Անգամ մըն ալ , քաղաքիս դպրոցական հանդէսի մը ժամանակ , ուսմէն դասատու մը կելլէ— չեմ գիտեր լսելքէն ինչ հով փըշէր— կրօնքի մասին ատենաբանութիւն կընէ , ու կըսէ թէ «հայերը հեթանոս են» , սակայն հայոց կողմէն իրեն գիտողութիւն կըլլայ եւ Պ. դասատուն հրապարակաւ իր թեքածը կը լզէ ըսելով թէ «Եթէ երբէք հայութիւնը հեթանոս չեմ անուանած եւ թէ իւր քրիստոնեայ եղբայր կը սիրեմ» : Վեր-

բերի պէս են ապրել , դրա համար էլ մեզ հայերէն չեն սովորեցրել , այ հիմա դուք սովորում էք : Հայաստանի հայերը մեզ պէս չեն , նրանք հայերէն են խօսում :

Մայր ու աղջիկ այս խօսակցութեան մէջ էին , երբ պարտէզ մտաւ մի Մշեցի , չոր չոր , բարձրահասակ , խիտ սեւ յօնքերով ու կրակոտ աչքերով երիտասարդ : Եւ երբ աչքը ընկաւ կարմիր գրօջակին՝ բացազանչեց .

— Օ՛հ , տիկին , արդուհի , գրօջակը պատրաստել էք : Որչափ գեղեցիկ է . վերջացրէք վաղը չէ միւս օր պէտք է երթամ :

— Վաղը պատրաստ կը լինի պարոն Հրանդ , վաղը երեկոյեան ձեզ կը յանձնեմ այս գրօջակը :

Լաւ պահեցէք , այնպէս որ երբէք թշնամու ձեռքը չընկնի :

— Եյո , տիկին , այդ գրօջակը պէտք է անենք հայ հայդուկներին ամենաքաջին յանձնելու համար , յոյս ունեմ որ նա երկար պիտի ծա-

շապէս այսօր դասատու մը կելլէ հայութիւնը հեթանոս կընէ , վաղը գրագիր մը շնապաշտ կընէ , մի օր չեմ գիտնար ով ի՞նչ պիտի ընէ : Խեղճ հայ , հայրենեացի մէջ բռնակալ զազան մը քրիստոնեութեանը համար բոլոր երակներու մէջէն արիւնդ ծրծեղով քեզ ցիրուցան կընէ , արտասահմանի մէջ ալ քրիստոնեայ ազգերը քեզ սիրելուն տեղ . կը նախապեն . բայց մի՛ վհատիր , ջանայ օգնել հայրենիքի փրկութեան գործին թէ գրամով կը թէ արիւնով , սրպէս զի դու ալ հայրենիքը վերադառնալով , առանց սերիչէ մը նախատուելու պատուաւոր կեանք վարես : Գիտցիր որ քու պատիւը ու փրկու թիւնդ ձեռքդ է եւ դուն կարող ես քեզ փրկել , եթէ կամես :

ԱՐՄԱԽԻՐ

ԼՕՐԷՆՍ , 6 Յունիվ .

Նոր տարուոյ առթիւ պէտք է նոր լուրեր հաղորդել . Ամերիկայի մէջ հայութիւնը սկսած է կամայ կամայ դուրս գալ իր կղզիացած վիճակէն , սխալութիւն թմբուցներն , արթննալ խորքունէն : Շարժումեր առաջ մի քանի քաղաքներ բարեկամներու տեսութեան էի գացեր . հայերը գտայ շարժուն վիճակի մէջ : Այո , սկսած է շարժել ինտիլիգէնտը , ու յուսով եմ թէ նոր տարին ու նոր դարը շարժելու գար է : Ամերիկայի երիտասարդներէն մեծ գործ կը յուսացուի ի նպաստ հայրենիքի փրկութեան դատին : Լուրի ու մնջիկ շարժում մը կը նշմարուի Հայ Յեղ . Դաշնակցական կօմիտէի մէջ . մէն մի քաղաք , ուր կօմիտէ կայ , հոն անպակաս են հրապարակային ժողովներ : Դեռ մէկ շաբթ առաջ էր սր տեղս հասարակագրութեան քաղաքացու թիւնը ունեցայ . Լօրէնսի չորս կողմը տարածայնութիւն մը սկը-

սաւ թէ դաշնակցականները գալ կիրակի հրապարակային ժողով ունին . անհամբեր կը սպասենք նոյն օրուան նորեկի ատենախօսութիւնը լսելու , եւ իրաւ ալ եղաւ : Հրատարակուած էր նաեւ ռուրիչ մը Պոստոնէն Պ. Ա. Լ. , Յունիվ 14ի երեկոյին էր երբ ժողովասրահէն ներս մտայ սեսայ ու հոն 300ի շափ հոծ բաղուութիւն մը , քանի մը վայրկեան նստելէ յետոյ , ժողովը բացուեցաւ «Մեր Հայրենիք» երգով : Քանի դաշնակցականներու ժողովին ներկայ եմ գտնուած , ընդհանրապէս վերայիչալ երգով բացուած է ժողովը : Ատենապետ Պ. Գ. Պ. ի հրատարակուած առաջին ատենախօսութեան Պ. Ա. Լ. որուն նիւթն էր «Ինչու յեղափոխացանք եւ ի՞նչ շահեցանք» . ու ըսաւ , յեղափոխացանք բառին բուն նշանակութեամբ մեր մարդկային իրաւունքները բռնաբարուած ըլլալուն համար , իր բաղաձայնի փաստերը տալով , մեր վրայ ճնշող տարր մը կար այն է թիւրք կառավարութիւնը , որ մենք այն ատեն կը հաւատայինք ճակատագրի՝ Աստուծոյն եկած բան մը համարելով պայն , բայց տակաւ տակաւ ճնշումը սաստկացաւ ու մինչև ուր դանակը ոսկորին հասաւ , ու քիչ մըն ալ գիտակցութեան եկանք ստրկի դառնութիւնը զգացինք մեր մորթին վրայ . անոր համար յեղափոխացանք օրինակութեամբ մեզ բաղաձայն ազգերէն : Մեր յեղափոխութեան առաջին քայլը առնողները եղան անհատներ . բայց անոնք ծնան խել մը անհատներ , մինչև որ ընդհանրական սուր կերպանքը ծտացաւ . եւ հոտ է մեր շահը . Չաթօ Յէրօ , Արթօ , պարզ գիւղացիներ էին . նոյնիսկ Մերթօ փաշան . որո՞ւ համար կուուեցան որո՞ւ համար նահատակուեցան : Վերջապէս ցոյց տուաւ թէ հինգ հարիւր երկար ու ձիգ տարիներու ընթացքին մէջ ստրկի կամ ծծող

և սարսափահար լինում : Այսօր մեր հայրենիքն է նոյն վիճակի մէջ : Տարայս ազատութեան մտքի ճշմոյշ , սոսա հայ ազատամբներին , որ այս կարմիր կերպար ես , նրանց քոյրը , թըշնել եմ իմ արցունքով , որ հոսել են իմ մորթիված քոյրերի եւ եղբայրների համար , խոնաւցրել եմ իմ շնչով , որ կուզէի փչել իմ կուռղ , ապստամբ հայրենիքի մէջ . . .

Այս խօսքերը արտասանած միջոցին տիկին Վարդուհին այնքան ազդու , հմայիչ եւ վեհ կերպարանք էր ստացել , որ Հրանդը կարծես իր դիմայ Հայաստանի պահպան հերշտակն էր տեսնում եւ չէր համարձակվում , աւելի ճիշդ չէր կարողանում մի խօսք արտասանել , վերջապէս մի քանի վայրկեան էլ ապշած մնալուց յետոյ՝ արցունքն աչքերին պատասխանեց .

— Կը տանիմ , տիկին , քոյր իմ , կը տանիմ . ձեր աւանդը սրբութեամբ իր տեղը կը հասցնեմ :

ՎԱՐԴՕ

ու ստորակ մեծցող հայրը, այսօր ճանչցուած է ազատութեան ընդունակ, ազգ և ճանչցուած թիւրքը թէ հայը կուզէ ապստամբ ազգ է և իր մէջը ունի գիւցազնակուն կրակ մը որ աւելի ու աւելի կաճի հակառակ իր գիւմած ամենատար միջոցներու, նոյնիսկ պատգամաւոր զրկեց հայ յեղափոխականներուն կասեցնելու համար, բայց անոնք ամէնուն քաջութեամբ պատասխանեցին — «Երբ նա մեզ կուզէ հանդարտեցունել պէտք է բարեկարգէ երկիրը և այն ատեն մենք հանգիստ կը կենանք» այս եղաւ անոնց պատասխանը: Բռուտ ծափահարութեամբ յարգուեցաւ յիշեալ ատենախօսը: յետոյ «հիմի է՞լ լռենք» երգին յաջորդեց պարոն Ա. Վառման, նիթ սեննալով, «փրկութեան ճամբան», հայ ժողովրդի անցեալ ու ներկայ կեանքէ՛ յարգելի ատենախօսը խօսեցաւ գրեթէ ժամու կէս և կենդանի ապացոյցներով ու անհերքելի փաստերով եկաւ այն եզրակացութեան թէ՛ փրկութեան միակ միջոցը զէնքն է և զէնքով միայն կարող ենք փրկուիլ: այժմեքերն իս ծալած սպասելու չենք: Մտափահարութիւնը անսահման էր: Ժողովը փակուեցաւ խիստ լաւ տպաւորութեան մը տակ: զո՞՞ սրտով մեկնեցանք: Յաջորդութիւն կը մտախօսէ այսպիսի եւս անդուն գործողներուն:

Ծ՝ՏԵՍԱ

Ա Ձ Դ

Խորհուրդս նկատելով որ հարսանիքի, թաղման, մկրտութեան և այլ ազգային վերաբերեալ գործառնութեանց ապաւիկի՛ դրութիւնը ազգային գործոց կանոնաւոր ընթացքին արգելք կը լինին, որոշեց յայտ հետէ խորհրդոյս հետ ըլլալիք ամբողջ գործառնութիւնը, առանց բացառութեան կանխիկ վճարմամբ լինին:

Ի զիմաց Թագ. Սորհրդոյ Ատենադպիր Ատենապետ Ս. Գաբրիէլեան Յ. Մ. Թովմասեան Վառնա, 31 Յունվար

Յ. ՃԱՆԿԻԿԻԱՆ

ՆՈՐ ԲԱՃՈՒԱՆ  
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՅ

Թիւ 389 Իսկիզի-պուշի

Կը վաճառուի ծրարստ, բոսթալի եւ ազերսագրի ամէն տեսակ բուլբուր նաեւ զանազան տեսակ սիկարներ: Զձ Թուականին հրապարակ ելած Պուլկարիոյ գահաժառանգ Պօրիսի պատկերազարդ քառթ-փոթալներ, որ այժմ չեն գործածուել: Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում»:

Շարժումը կը ծախուի նաեւ նամակատան զիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը:

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Զարբանէլեանի գրատունը եւ խմբագրութեանս մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Լը Ժուրնալ աը Ժընէվ-ին Պօլսէն գրուած նամակէ մը հետեւեալը կը քաղենք:

Դրամական անսպասովութիւնը անփոփոխ է: Ելեւմտից նախարարութիւնը երկրագործական պանքայէն 800 հազար լիրա պարտք վերցուցած է, առանց վճարելու յոյսունենալու: պահեստի գումարն ալ յափշտակեց մտաւորագէտ մէկ միլիոն ոսկի: քաղաքական պաշտօնեաներու պահեստին ամսաթոշակներու գանձարանէն, նոյնպէս որբերու գանձարանէն, մէկ խօսքով ամէն դրամարկէ, ուր որ հրաշքով քիչ մը ստակ մնացեր էր:

Այս գրամական տագնապի առթած անհանդուրտութիւնը հետզհետէ կը մեծնայ և թուրքիոյ կենաց և մահու խնդրի չափերը կառնու:

Եկամտաւոր սղբերունքը՝ գաւառները հետզհետէ կը շորնան և դրամի առաքումը կը պակսի վրդովեցուցիչ չափով մը, շնորհիւ տնիշխանութեան և վարչական անկարգութիւններու որ կը տիրապետեն գաւառներու մէջ:

Առանց խոշոր յոռետես մը ըլլալու մարդ պիտի գուշակէ որ այսպէս երկար չի կրնայ տեսել: Եւ պիտի փոխուի յայս վիճակը կամ վերջ մը արուի:

Շատ կը խօսուի տեսակ մը բաւենորոգութիւններու մասին, որ Սուլթանը պիտի ներկայացնէ Եւրոպայի հաւաքուած մեծ ժողովի մէջ թէ կարելի է պարզ ցանկութիւնը իրողութիւն ընդունել:

Գաւառէն եկած լուրերը տըխրալի են: Այլպանիոյ մէջ, մանաւանդ հիւսիսային կողմերը խառնակութիւնը և յուլումը կը լսուի:

Հայաստանը շարունակ կը տանջուի, կը նեղուի, սոված է և կը հալածուի քիւրտ զօրքերէն որոնք միմիայն քիւրտ պեյերու իշխանութիւնը կը ճանչնան, իսկ ստանք ալ սը մէկ իշխանութիւն կընդունին: Այնպէս որ Վանայ վայրի պաշտօնապէս յայտարարած է թէ ինքը անկարող է առաջը առնել այնպիսի քիւրտ պեյերու շարագործութիւններուն ինչպիսիք են Էմին, Հուսէին և Իսուան, փաշաները:

— Պօլսէն կը հաղորդեն թէ՛ Հալէպի հայ բողոքականաց եւ պիսկոպոսը, որ անցեալները ձերբակալուած էր իր ծուխերէն աղքատներուն համար գրամ հանգանակելուն պատճառաւ, և թուրք իշխանութեանէն կը մեղադրուէր, իբր թէ այդ հանգանակութիւնը յեղափոխութեան համար եղած ըլլար, այսօր ազատուած է երաշխաւորութեամբ:

շնորհիւ անգլիական դեսպանի միջամտութեան:

— Հռոմէն փետրուար 6ին կը հաղորդեն թէ՛ Գահիրէի իտալական գործակատարը տեղեկագիր մը զրկած է իտալիոյ արաաքին գործոց նախարարութեան, որով եղիպտոսի մէջ, վիճակը շատ վտանգաւոր կը գտնէ և իր կառավարութեան խորհուրդ կուտայ պատրաստ գտնուիլ սպասուելիք բարդութիւններու համար:

Ներքին գործոց նախարարը Անգլիոյ դեսպանին հետ երկար տեսակցութիւն մը ունեցեր է:

— Բարիզի մէջ վախճաններ է հաշակատոր ռուս յեղափոխական գործիչ և գրագէտ Պ. Լաւրով: Լաւրով իր ուսումը վերածացուցած էր Բեդերսպուրկի զինուորական ճեմարանի մէջ, բայց սղատա՛միտ և ըմբոստ ըլլալով՝ շուտով կառավարութեան հալածանքին ենթարկուեցաւ և արտորոցեալ Սիպրիոս: 70 թուականին փախաւ, և Բարիզ գնաց նշանաւոր ռուս յեղափոխական և գրագէտ Հերմէնի հրաւիրանքով միասին աշխատելու, սակայն Հերմէն մեռաւ և Լաւրով սկսաւ միայն աշխատել:

Լաւրով ռուս ազատամիտ երիտասարդութեան շատ համակրելի էր և մեծ բարոյական ազդեցութիւն ունէր անոր վրայ: Ռուս յեղափոխական գործիչներու և համակրելի ու լուրջ աիպերէն մին էր:

— Ռուսական «Բոսսիա» թերթը Ռուսիոյ ու Պարսկաստանի մէջ եղած դրամական համաձայնութիւնը մեծ հարուած կը նկատէ Անգլիոյ ազդեցութեանը Ասիոյ մէջ: Լրագիրը կաւելցնէ թէ Ռուսիա գուցէ երբեք իր ազգային շահերու համար այնչափ շահաւոր կերպով գործած չէր:

— Անգլիական թերթերու մէջ հրատարակուած անգլիացի զինուորներու նամակները աւելի լաւ կը բնորոշեն հարաւային Ափրիկէի պատերազմը քան թէ բոլոր պաշտօնական հետազոտները:

Գաղութային զինուոր մը կը պատմէ թէ ինք, Կոլէնզոյի վրայ յարձակումէն սուս լրած է Պօէրներու խրամատներէն կանանց և մանուկներու ձայներ և կանջ կախած է մեծ վարմանօք, առանց հաւատալու իր զգայարանքին:

Նոյնպէս ուրիշներ ալ գրած են, որոնցմէ մին կը պատմէ թէ կուռի ամենատաք վայրկեաններուն թմրակահարներէն մին, որ իր վաշտի առջեւէն թմրուկ կը զարնէր, տեսած է որ կիները իրենց փէշերով լի փամփոշուներ կը բերեն եղբր իրենց ամուսիններուն: Եւ այդպէս կանցնին եղբր բաց դաշտէն, տեղացող գնդակներու մէջէն:

Պատնէշներու վրայ կը գըտնուին եղբր մանչեր լի քսակներ:

րով սրնք կուտան կանանց վերադարձին նորէն գնդակ տանելու համար:

Անգլիացիները հետուէն այդ նկատելով կը կարծեն եղբր թէ Պօէրները կը փախչին և կրակը աւելի կը սաստկացնեն:

Արիշ հեռագիր մը կը պատմէ թէ Պօէրները իրենց մեռելները կը թաղեն սեսակ մը հորերու մէջ, այդ գիւղերու մէջ կը դառնուին նաեւ շատ մը կանացի ու մանկական գիւղեր, որք սպանուած են փամփոշու տանելու ատեն:

Երբ կանայք և մանուկներ անգամ կը պատերազմին, այդպիսի պատերազմ մը կը վերջանայ միայն վերջին պատերազմողի հետ: ամէն մարդ որ կրնայ զգածուիլ տեսնելով այս ժողովրդի իր ազատութեան համար մինչ մահ կուռիլը, կակնածի և կը թուշի գէպի հին հերոսներու ժամանակը:

Յունաստան և Միջիւրտէս, Ջուրիցերիա և Վիլիէլմ Թէլլ, Պրանսա և Ժանն-արկ, Հօլլանտա և Կիւս, ահա անցեալ հերոսութեան օրինակները: Պատմութիւնը անոնց վրայ պիտի աւելցնէ նոյնպէս Թրանսպալի Պօէրներու կիրքը:

ԳՐԵՋՐԱՏՈՒՆ, ՍԱՆԹՐԱԼ

Տ. ԹԻԻՖԵՆԷՆՃԱՆԻ

Մուսալլաի Թաղապետական պարտեզին զիմաց, նախկին Ա.Ս.Ս. Սլաւօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՛ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գրքերը լատուներ, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել:

ԸՆԴԱՐՁԱԿ ԵՐԿՐԱՆ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՒԱՎԱԾՈՅ

Հին եւ նոր Ազգ. երգերու գին 2 ֆր. սոյն երգարանը կը ծախուի Վառնա, Ա. Զարպանէլեանի գրատունը նաեւ կը գտնուի ամէն տեսակ զարգացական եւ վիպական գրքեր. գրամի փոխարէն կընդունի նաեւ նամակագրոյ՛մ. Գնում եւ վաճառում ամէն տեսակ գործածուած նամակագրոյ՛մ երոյ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ. «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեատման, հասցեատման, նամակագրութեան, հարոսանեկան հրաւիրազրու, մահապաղ, ինչպէս նաեւ պրօշիւններ:

Գիները յոյժ զիւրամտալի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԿ